

կանք կան եւ ուխտատեղիք — իմ երեսս նոցա մոխիր — ոչ թէ ամիս, այլ եւ բոլոր տարին չկարէ ոք վճարել զնոսա :

- Արդ զորս գովեցից կամ զորս նախ դրաւ տեցից . զԵրուսաղէմ թէ զԲեթղէհէմ . թէ զսուրբ Սիոն, եթէ զայլսն, ես որ տրուպ եւ փանաքիս եմ . քանզի նա քաղաք է մեծին Աստուծոյ . ի նմա Աստուած երեւեցաւ աշխարհի եւ խօսեցաւ . եւ անտի էառ զհողն եւ ի Բեթղէհէմ ծնաւ, մկրտեցաւ . եւ անդ կատարեաց զամենայն անօրէնութիւնս եւ զմարդեղութիւնս . եւ ոչ հեռանայր ի նմանէ ամենեւին, որպէս եւ ինքն իսկ ասէր, թէ Ոչ է պարտ արտաքոյ քան զԵրուսաղէմ գնալ . զոր ամենայն մարդարէք, առաքեալք եւ թաղաւորք եւ նահապետքն ցանկային եւ փափաղէին . որպէս եւ Մովսէս ազաչէր ընդ աղօտս տեսանել եւ ոչ կարաց . զի Երուսաղէմ երկիրք է վերին, զրախտ եւ սուրբ քաղաք Աստուծոյ, ուր սկիզբն եղեւ փրկութեան մերոյ եւ զատաստան անդ լինելոց է եւ կատարում . եւ թէ ոք կարէր մի ըստ միոջէ պատմել զէութիւն կամ գրել զփառս մեծութեան նորա, զիարդ կարէր . զի անպատմելի է եւ անասելի . եւ եթէ լինէր ծովն մէջան եւ քարինք ամենայն քարտէզ, ոչ էր բաւական տանել : Ոչ եթէ ես փանաքիս եւ մեղօք զառածեալս, ոչ ինձ, այլ միայն ընդ Դաւթի համարձակիմ ասել . Թէ մոռացայց զքեզ Երուսաղէմ, մոռացէ զիս աջ